

ք. Երևան

« 16 » « 11 » 2021թ.

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղարի փոխարինող Ա. Ազատյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Ճաննախագիծ ինստիտուտ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Դ. Քարտաշյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, միասին այսուհետև՝ Կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, հիմք ընդունելով Կողմերի միջև 20.10.2021թ. կնքված N ՏԿԵՆ-ՄԱ-ԾՁԲ-2021/15Հ պետական գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.5 կետը փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

**1. Համաձայնագրի առարկան**

Կողմերը որոշեցին՝

1.1 «Մ-4. Երևան-Սևան-Իջևան-Աղբբեջանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ83+200-կմ91+176 հատվածի հիմնանորոգման աշխատանքների նկատմամբ հեղինակային հսկողության ծառայությունների մատուցման սկիզբ սահմանել 11.10.2021թ.»:

**2. Այլ պայմաններ**

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

Համաձայնագրի պայմանները կիրառվում են պայմանագիրը կնքելուց հետո մինչև դրա հիման վրա համաձայնագիր կնքելը՝ կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ:»

2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն Համաձայնագիրը կնքվում է հայերեն լեզվով երկու օրինակից, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

**3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն  
ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,  
ՀՀ կենտրոնական գանձապետարան  
ՀՀ 900011002632  
ՀՎՀՀ 02815457  
գլխավոր քարտուղարին փոխարինող  
Ա. Ազատյան

**ԿԱՏԱՐՈՂ**

«Ճաննախագիծ ինստիտուտ» ՍՊԸ  
ՀՀ, ք. Երևան, Աճառյան 54բ  
Ինտերբանկ ՓԲԸ  
ՀՀ 2050022451291001  
ՀՎՀՀ 00813453  
Տնօրեն  
Դ. Քարտաշյան

